«...ԵՍ ՐԱՌԵՐԻ ՄԵՋ ՃԱՌԱԳԵՑԻ»

(Համո Սահյանի դիմանկարի ներքագծեր, ծննդյան 70-ամյակի առթիվ)

ՍՈՒՐԵՆ ԱՂԱԲԱԲՅԱՆ

Հազվադեպ է պատահում, որ բանաստեղծ են հռչակվում մեկ բանաստեղծությամբ։ Այդպես եղավ Համո Սահյանի հետ, որը 1944-ին, դեռ նավաստիական համազգեստի մեջ, Բաքվից Երևան ուղարկեց ամենախստապահանջ գրողին՝ Ստեփան Զորյանին, իր «Նաիրյան դալար բարդին» բանաստեղծությունը և արժանացավ նրա տաք վերաբերմունքին։ Այդ բանաստեղծության տպագրությունը ոչ միայն անցողիկ մի փաստ չէր, այլև գեղարվեստական անանցողիկ հայտնություն էր, ուստի և շարժեց գրական շրջանների բուռն, անվերապահ հետաքրքրությունը։

Ստեփան Զորյանի նամակ-հրավերով Համո Սահյանը եկավ Երևան և նրա իսկ հարկի տակ, նրա իսկ հսկողությամբ ու խմբագրությամբ պատրաստեց բանաստեղծությունների առաջին հավաքածուն՝ «Որոտանի եղերքին» (1946) խորագրով։ Մինչև այդ ժողովածուի տպագրությունը Ստեփան Զորյանը գրողների բազմամարդ ժողովում զեկուցում էր կարդացել Համո Սահյանի բանաստեղծությունների մասին, նրա մուտքը կապելով ազգային բանաստեղծական ավանդների շարունակման և հայրենասիրական ներշնչանքների անկեղծության հետ։ Այդ զեկուցման տեքստը տպագրվեց տարիներ անց, «Սովետական գրականություն» ամսագրի 1974 թ. ապրիլյան համարում։ Տեքստում կան ժամանակի քննությունը բռնած բնորոշումներ՝ «սովորաբար կարոտի երգերը թախծոտ են լինում և տխուր, Սահյանի կարոտերգերի մեջ չկա տխուր շեշտ» կամ՝ «Սահյանն ունի ոճավորումներ մեր ժողովրդական երգերի ձևով, որ ոչ թե ընդօրինակություններ են, այլ ինքնատիպ, թարմ գործեր»։

Ստ. Զորյանի ուշադրությանը Հ. Սահյանը հետագայում պատասխանեց մի նվիրումով, ուր ասվում է՝

Դուք հոր նման խիստ եք եղել
Ու հոր նման ներող,
Ձեր խորհուրդը խորն է եղել
Ու խրատը գերող։

Անպակաս եղան մամուլի արձագանքները, որոնց մեջ էր Նաիրի Զարյանի ոգեշնչված գրախոսությունը։ Նշանակալից էր Ստ. Զորյանի զեկուցման հետևյալ միտքը՝ «Սահյանը դեռ գնալու ճանապարհ ունի»։

Ո՞րն էր գրական միջավայրին՝ սկսած նրա մեծերից մինչև շարքայինները, համակած ուրախության և ոգևորության գաղտնիքը։

«Որոտանի եղերքին» ժողովածուն բերում էր վճիտ, անպաճույճ հայացք կյանքի՝ կեցության երևույթների հանդեպ, ժողովրդական-ֆոլկլորային բառուբան, բնական պատկեր ու բնական զգացմունք, հայրենի աշխարհի կենդանի, անխառն զգացողություններ։ Այս կետերից էլ սկսվեց նրա բանաստեղծական ճանապարհը, որն առաջ բերեց նաև որոշ ընդդիմադրություններ,— իբրև թե Համո Սահյանը կյանքի բազմակողմանի հարստությունը «խցկում է Որոտանի նեղ կիրճի մեջ», իբրև թե տուրք է տալիս ֆոլկլորակերպ պարզունակ մըտածողությանը, իբրև թե միակողմանի վերաբերմունքով հափշտակված է միայն բնության նկարչությամբ։

Մի որոշ ժամանակ Համո Սահյանը համաձայնեց քննադատության պահանջներին ու պատվիրաններին, գրեց սակավարյուն «թեմատիկական» տողեր, սակայն շատ շուտով, ներքին ուժեղ բնազդով, հասկացավ, թե արվեստի մեջ ինչ մեծ բան է միակողմանիությունը։ Համո Սահյանը, իհարկե, անծանոթ էր Դերենիկ Դեմիրճյանի հերթական «պարադոքսին», թե աշխարհի ընկալման բազմակողմանիության նախապայմանը միակողմանիությունն է՝ կենտրոնացումը մի նյութի, մի առանցքի վրա, սակայն նրա էության մեջ խոսում էր ճշմարիտ բանաստեղծի ձայնը։ Այս առումով բնկումնային եղավ «Բարձունքի վրա» (1954) ժողովածուն, ուր թեև կային «թեմատիկական լայնացման» ոչ քիչ նմուշներ, սակայն ճիշտ էր գտնված Հ. Սահյանի տաղանդին հատուկ բնության գրության ուղղությունը։

«Բարձունքի վրա» ժողովածուն ուշագրավ էր նաև «փոքր հայրենիքի»՝ ծննդավայրի և «մեծ հայրենիքի»՝ ամբողջ երկրի սերտ առնչությունների դրվածքով։

Համո Սահյանը ամբողջովին, անմնացորդ սուզվեց բնության էության մեջ և նրա ստեղծագործական ճանապարհի նոր սկիզբ հանդիսացավ «Քարափների երգը» հավաքածուն (1963), ուր նա վերջնականապես և վճռականապես ազատագրվեց իր աշխարհին խորթ, եկամուտ նյութերի վերարծարծումներից և հաստատվեց իր աշխարհի դիրքերում։ «Քարափների երգը» նշանավորվեց, նախ և առաջ, բնության երկրպագությամբ, այսպես կոչված վերադարձի խոստովանություններով, Մայր բնության հետ ձուլվելու ներքին կարիքով։ Այդ Վերադարձն ու Կարիքը, Քարափներին ապավինելը նշանակում էր ոչ այլ ինչ, եթե... մարդու վերադարձը դեպի ինքն իրեն, մարդու էության իրարախույս բևեռների միասնության որոնում։

Ռուս հայտնի գրական քննադատ Ստանիսլավ Ռասսադինը տարիներ առաջ «Юность» ամսագրում տպագրած իր մի հոդվածում, որը կոչվում էր «Հաղթահարում», անդրադառնալով Համո Սահյանի և Պ. Սևակի բանաստեղծական աշխարհների էությանը, առաջինի համար բնորոշ էր համարում «մարդը բնության երկվորյակն է» բանաձևը, երկրորդի համար «բնությունը մարդու երկվորյակն է» բանաձևը։ Իհարկե, էական տարբերություններ կան վերոբերյալ սահմանումների միջև (մեկի համար հավերժականը բնությունն է, մյուսի համար՝ մարդկային կյանքը) և, այդուամենայնիվ, նույն տարբերություններով իսկ, քննադատի տեսակետով, Համո Սահյանը և Պարույր Սևակը արյունակից-տոհմակիցներ են՝ իբրև բանաստեղծության ճշմարտության համբավաբերներ, իբրև աշխարհի անդաշն կերպերից նրա ներդաշնակությունը կառուցողներ, իբրև «քառսից» «հոգու կոսմոսը» ստեղծողներ։

Համո Սահյանի համար ճանապարհն անցնում է բնության միջով։ Բնության նրա մեկնաբանությունն ամենևին առնչություն չունի ոչ պանթեիստական աշխարհայացքի հետ, որի համաձայն բնությունը ամտվածաշնչյան «գաղափարական ապաստարան» է, ոչ XX դարասկզբի որոշ գեղարվեստագետների (օրինակ, նորվեգացի Կնուտ Համսունի) առաջարկած «հովվերգության ապաստարանի հետ», ոչ նույն XX դարում սրբագործված «անշարժ», «անեղծ», գավառական ռոմանտիկայի արտահայտությունների հետ։ Հ. Սահյանի ներկայացրած բնությունը ամենից առաջ ինքնուրույն և մեծ, անկախ և հարուստ գոյություն է, ուր XX դարավերջի տագնապների մեջ ընկած մարդը որոնում է... մարդուն, որոնում է իր «ներքին պատկերը»։ Ջափազանց բնորոշ է հետևյալ փոխակերպությունը. եթե մինչ XIX դարի (և ավելի վաղ ժամանակների) բանաստեղծները անձնավորում էին բնությունը, բնության տարբեր երևույթներին հատկացնելով մարդկային դեմք ու դիմակ, ապա XX դարում կատարվում է հակադարձ երևույթը՝ բանաստեղծներն արդեն մարդուն են հատկացնում բնությանը հատուկ գծեր, բնությունից են վերաքաղում այն գույները, որոնք անհրաժեշտ են մարդու ամբողջացմանը։

Հիշենք Ավետիք Իսահակյանի սքանչելի բանաստեղծություններից մեկի հետևյալ պատվիրանը.

Ծունր իջիր երկյուղած
Եվ այս մամռոտ ժայռը մեծ
Խոնարհ սրտով համբուրիր—
Նա եղբայրն է քո երեց...

Իմաստության այս շառավիղով էլ Համո Սահյանը վերադառնում է դեպի իր քարափներն ու սարերը, անտառներն ու հովիտները, դեպի Գյազբելն ու Սալվարդը, դեպի իր «կանաչ եղերքը»՝ գտնելու այնտեղ մարդուն հիշեցնող «կուլտուրական այն շերտերը», որոնց գոյության մասին շարունակ ազդարարում էր Միխայիլ Պրիշվինը՝ ռուս ականավոր բնապաշտը, բնության մեծ գիտակն ու փիլիսոփան։ Բնության այս ըմբռնումը՝ «ամեն ինչ բնության մեջ ունի իր դեմքը», XX դարի հայտնագործությունն է, որով և բացատրվում է նորագույն արվեստի բնության կողմնորոշումը, այն ըմբռնումը, որը բնավ աղերսներ չունի «քաղաքակրթության մայրամուտի» դարասկզբից հոլովվող իմաստասիրությունների հետ։ Մինչ մայրամուտային փիլիսոփայության տարբերակներում արտահայտվում է պատմության հոգեվարքի, անգամ ապոկալիպսիսի հոգեբանությունը, ապա դեպի բնությունը կանչող գեղագիտության այլևայլ տարբերակներում երևում են այն աղբյուրները, որոնք կոչված են հրահրելու ներդաշնակ մարդու ժամանակակից իդեալը։

Եկել եմ, որ մի անգամ էլ
Նստեմ քեզ հետ,
Խոսք-խոսքի տամ, խորհուրդ անեմ,—

Համո Սահյանի այս և նման տողերը ոչ այլ ինչ են, եթե... բնության գծերով իրեն ստուգող, բնությունից դաշնության ոգին վերաքաղող մարդկային անհատականության հարստացման պատգամախոսություն։ «Քարափների երգը» գրքում ուշագրավ էր նաև զարմանալի, եղբայրական-ծնողական արյունակցության հասնող մտերմությունը բնության պես-պես դրվագների հետ։ Այդպիսի բանաստեղծությունները շատ-շատ են, մեկը մեկից ուժեղ և իմաստուն, ինչպես, օրինակ, «Քարափը».

Ծանր նստել է քարափը ձորում,
Հյուրընկալ տերը մանկության ձորի։
Ճակատից քարե քրտինք է ծորում,
Ուսից կախվում են մամուռ ու մորի։
Նստել է ձորում՝ երկինքը դեմքին,
Ծանր նստել է և ամեն մեկին
Իրենց արժանի պատիվն է տալիս.
Վայրի աղավնուն՝ հաճարը վայրի,
Մոլորված ամպին՝ իր քիվն է տալիս,
Խրտնած քարայծին՝ մութն իր քարայրի։
Հոգնած ճամփորդին պատիվ է անում,
Ցրտին՝ տաքության հոգեպահուստով,
Շոգին՝ ձյունահամ աղբյուրով անուշ
Եվ իր ստվերի լայն առագաստով։

Բնության դրվագների «անանձնական» էության սահյանական մեկնաբանությունը փոխկանչի է գնում հայոց բանաստեղծության թումանյանական-մեծարենցյան-իսահակյանական-բակունցյան ավանդույթների հետ։ Թումանյանականը կյանքի անսահմանության և «կյանքի հրաշքի» ըմբռնումն է, մեծարենցյանը՝ անանձնական «ըլլայիների» մարդասիրության կետը, իսահակյանականը՝ բնության բարեկամության և մտերմության շունչը, բակունցյանը՝ «բնական մարդու» վերադարձի մեծարանքի շերտը։ Եվ, այսուամենայնիվ,

Համո Սահյանի պոեզիան ինքնուրույն և ինքնատիպ արժեք է, ծանրակշիռ և իմաստուն, կրում է իր անհատականության դրոշմը։

Համո Սահյանի ուսուցիչների և նախորդների շարքում կարելի է ավելացնել նաև ուրիշ անուններ (Վահան Տերյան, Սերգեյ Եսենին, Գարսիա Լորկա և այլն)։ Այդ շղթայի օղակներից մեկն է նա մի շարք առումներով, հատկապես բանաստեղծական զգացմունքի անմիջականությամբ և մտքի խորությամբ, բնության մոդելների միջոցով կյանքի դրամատիկական բովանդակությունը արտահայտելու մղումներով, իր բառուբանի ժողովրդաշունչ-ֆոլկլորակերպ կողմնորոշումով։

Արդեն առաջին՝ ջահելության շրջանի բանաստեղծություններում Համո Սահյանի տողերը ճառագում էին անմիջական, հոգեկան մտերմության ու հաղորդակցության կանչող խոսքեր («Իմ թևավորըս, արևավորըս, դու ե՞րբ ես գալու», «Անտառում» և այլն)։ Իսկ իմաստության հասակում, բնավ կորցնելով չմատնելով տարերային անմիջականությունը, Համո Սահյանի պոեզիան հակվում է դեպի «աշխարհի բանի» փիլիսոփայական սուզումները, Գոյության իմաստալից բացահայտումները՝

Խորքերում գանձ ունին քարափները,
Թիկունքներին ունեն անտառ ու հերկ,
Միայն մի բան չունեն քարափները,
Քարափները չունեն կարապի երգ...

կամ՝

Մի շեն աշխարհ մեր աչքերում,
Ճախրում էինք՝ մեր առջևում
Կանաչ-կարմիր օրեր...
Ա՜խ, եթե կաք այն աշխարհում,
Դուք առանց ինձ ի՞նչ եք անում,
Լորահովտի լորեր։

Համո Սահյանի պոեզիայում աստիճանաբար նվազեցին հայեցողական տարրերը և, հակառակը, ուժեղացան դրամատիկական շեշտերը։ Կածանի կենսագրությունը, մասրենու մենախոսությունը, քարափի ինքնասուզումը, անտառի տարերքը և այլն, և այլն, երևում են ոչ միայն բնապատկերային նկարագրությամբ, այլև կյանքային սուզումներով՝ համարժեքներով։ Օրինակ, «Հողմը անտառում» բանաստեղծության մեջ Հ. Սահյանը ներկայացնում է անտառային սովորական տարերքին համապատասխանող մարդկային դրաման՝ կյանքային ալեկոծությունների, շարժումների, պայթյունների մի ամբողջական տեսություն.

Եղե՞լ եք երբևէ անտառում
Տեսել եք թե ինչ է կատարվում,
Երբ հողմը մտնում է անտառ։
Ճչում են հավքերը, թրփրտում
Եվ իրենց երկինք են շպրտում,
Մտնում են հավքերը անտառ։
Թափվում են բները ճյուղերից,
Կախվում են ճտերը շյուղերից,
Դողում են ճտերը անթև,
Փախչում են ճտերը բներից,
Կառչում են ծառերը բներից
Մնում են ճտերը՝ անտեր...

. . . .

Եվ հետո՝ հսկաներ տապալված,
Եվ բներ, և բներ խափանված,
Հավքի ճիչ... մեղվի թիռ... աշխարհ...

Աշխարհի տագնապների նմանօրինակ անդրադարձումներով Համո Սահյանը արտահայտում է նաև սոցիալական-բարոյական հարցեր՝ ինչպես մարդու և բնության խաթարված հավասարակշռության վերանորոգման խնդիրը (որը դարձել է ժամանակակից արվեստի առանցքային խնդիրներից մեկը), ինչպես մարդու օտարացումը ինքն իրենից (մի երևույթ, որը կեցության «ուրբանիզացիայի» անմիջական հետևանքն է), ինչպես մարդկային հարաբերությունների նախաստեղծ պարզության կորուստները (որը մեր օրերում վերաճել է դրամատիկական սուր կերպարանքի)։ Այս խնդիրների պարբերական արծարծումներով Հ. Սահյանը չի դառնում ետահայաց մտածող՝ կյանքի նահապետական ձևերի իդեալականացման ուղղությամբ։ Այդպիսի վերագրումներ, իհարկե, եղել են, նրա հողային-բնապաշտական-եզերքային ներշնչանքների մեջ «դիտելով» սոսկ անմարդաբնակ ժայռերին ու անտառներին ապավինած միայնակ հոգիների անհասկանալի դիմադրությունը կյանքի նորոգման ընթացքին։ Ամբողջ խնդիրն էլ այն է, որ այդ իսկ ներշնչանքներով՝ վերադարձի կանչերով, Համո Սահյանը մեծարում է բնության և հողի (սա հոմանիշն է կյանքի, առհասարակ աշխարհի) ստեղծարար, կենսունակ, զարգացմանն անհրաժեշտ սկիզբը, իսկ նահապետական անհետացող կեցության մեջ գնահատում է աշխատավորի՝ սերմանողի, մաճկալի, հերկվորի, հնձվորի բարոյական խիղճը։

Արձանագրենք նաև այն պարագան, որ Հ. Սահյանին շատ հաճախ «այցելում է» նոստալգիան՝ տխրաշունչ կարոտը իր մանկության օրերի, ծննդավայրի գույների հանդեպ,— խորապես բնական—մարդկային մի զգացմունք, որով բացվում է հիշողությունների կծիկը.

Զանգեզուրում կա մի գետ,
Որ խոսում է ափի հետ,
Հոսում է օրնիբուն...
Գետի ափին այն վճիտ
Կա անպաճուճ մի խրճիթ—
Գեղջկական մի տուն։
Կտուր ունի մի ծաղկած
Եվ պատի տակ թեք ընկած
Մի գերանացու...
Բակում թփեր կան վարդի
Խանում-խաթուն մի բարդի
Ու երեք ածու...

Սա Համո Սահյանի հայրական տունն է Որոտանի եզերքին (այստեղ Լոր գյուղում է 1914-ին ծնվել ապագա բանաստեղծը)։ Այդ տանը իրիկնահացի է նստել Խաչի պապի մեծ գերդաստանը, այստեղ է Համո Սահյանը ապրել հոգեկան առաջին դրաման՝

Տխրությունս կամաց-կամաց
Փոխվում է լացի...

Մանկությունը մարդու կյանքի ամենալավ ժամանակն է, անգամ այն դեպքում, երբ աղքատ, անշուք, հուզախռով է այդ մանկությունը։ Հ. Սահյանի մանկության մեջ, ինչպես երևում է իր բանաստեղծական հիշողություններից, եղել են բազմաթիվ գունավոր-նախշուն պատկերներ, սակայն դրանց բարձրակետը հետևյալ հովվերգությունն է.

Իջնում էր խոհուն, խոնարհ
Դեզերի ուսին
Մի կաթնահունց երկնակամար,
Մի ծերատ լուսին...

Մեկը մեկից ամաչելով,
Եվ զուսպ և հավաք,
Նստում էին մերոնք կարգով—
Կրտսեր ու ավագ։
Նստում էին ու սպասում
Մինչև պապը գար,
Մինչև բակում Ծաղիկ եզան
Զանգը ծլնգար։
Պապը գալիս, սուփրի գլխին
Նստում էր շուքով,
Եվ լցվում էր տունը դաշտի
Բույր ու շշուկով...
Ու երբ տատս ձեռքն էր առնում
Շերեփը իր հին,
Գդալները բնազդաբար
Աղմկում էին...

Համո Սահյանը անմնացորդ նվիրված է իր մանկությանը, ուր ամեն ինչ պարզ ու նախնական էր, «անգաղտնիք» էր ու անխորհուրդ, ուր

Կարծես ամեն ինչ հասկանալի էր
Ոչ մի բանի մեջ խորհուրդ չկար,

ուր ամենամեծ հրաշքը իր գյուղն էր, որը՝

Հողոտ, մղեղոտ մի մութ էր հագնում
Հետո լուսնյակ էր հագնում մեր տունը։
Կտուրին բարդու ստվերն էր քնում,
Եվ շեմի վրա քնում էր շունը։
Կիսարթուն քամին կտուրից թռչում,
Ցանկապատին էր հենում կոնակը։
Անթեղի վրա կատուն էր քնում,
Իսկ անթեղի տակ հոգնած կրակը։
Բակը փուլ գալիս և առոք-փառոք
Որոճում էին օրհնած եզները։
Տան կտուրի տակ արթուն էին լոկ
Հողոտ, մղեղոտ մեր երազները...

Հայրենական գեղջկական տունը՝ «անպաճույճ խրճիթը», իր շրջապատով, ծառ ու թփով, ամեն-ամեն ինչով, «բուրում է մանկությամբ», այդ մանկության վերհուշները՝

Ա՜խ, ինձ այնտեղ տարան,
Լեռնաշխարհը տարան
Այն երկնամերձ,—

ուր նախնիները «ապրում էին, մեռնում», «աղոթք էին անում ու բախտ էին բռնում», «հույսեր էին թաղում, հոգսեր էին քաշում», «զրույց էին անում աստծու հետ սուտ», «եզան վզից ուլունք ու զանգ էին կախում»,—

Եվ ապրում են հիմա
Ու հեքիաթ են ասում
Իմ հուշերի հարուստ
Տերության մեջ։

«Հուշերի տերության» մեջ, ինչպես վկայում են բանաստեղծությունները, կան ազգագրական-կենցաղային-հոգեբանական շատ մանրամասնություններ՝ այդ ամենի վրա դրոշմված Հ. Սահյանի անհատականության կնիքը։ Իսկ գրականության մեջ, առհասարակ արվեստի մեջ, սեփական կնիք ունենալը շատ մեծ բան է։ Դա ինքնության ամենաստույգ վկայությունն է։ Հ. Սահյանի ինքնության կնիքը երևում է ոչ միայն աշխարհազգացական կոորդինատներում, որը չափազանց հարուստ շերտեր է պարունակում, այլև բանաստեղծությունների կառուցվածքում, արտահայտման լեզվի՝ ձեռագրի մեջ։ Թեև ժամանակակից բանաստեղծների մեջ Հ. Սահյանը համարվում է ավանդական, անգամ՝ «պահպանողական», բայց իրականում նա բանաստեղծության կառուցվածքների և ձևերի նորարար է՝ այս հասկացության ամենաբարձր նշանակությամբ։ Հայոց բազմադարյան բանաստեղծության պատմության մեջ (և ոչ միայն հայոց) դժվար է մատնացույց անել որևէ մեկին՝ հայտաբերելու համեմատության եզրեր։ Օրինակ, ո՞ր բանաստեղծության հետ համեմատես սահյանական տողերի այս կառուցվածքը՝

Կայծակ էր, խփեց, բեկվեց, թփրտաց,—
Ու մեկը մեռավ լեռան կատարին,—
Երանի՜ նրան,—

Կամ այս մեկը՝

Իջավ սարյակը դաշտում—ծիլ էր կտուցին,—
Շուրթի վրա մի կանաչ տող էր թպրտում,—

Կամ այս մյուսը՝

Ժայռից մասուր է կաթում,
Կարմիր սարսուռ է կաթում,
Ջորում մշուշ է։

Համո Սահյանի բանաստեղծական աշխարհի էպիկենտրոնը «բառաշաղախն է», ինչպես շատ ճիշտ նկատել է բանաստեղծուհի Մարո Մարգարյանը 1974-ին «Հայրենիքի ձայն» թերթում տպագրած հոդվածում։ Իրապես, հազարամյա-հազարամաշ բառերի նոր դասավորության, դրանց նոր համաձայնությունների ու հնչերանգային փոփոխությունների, բառագանձարանի տոհմական-ազգային շնչի հայտաբերման մեջ է Հ. Սահյանի ճանապարհը, որը առաջին տպավորությամբ թեև չի թողնում դժվարանցի (ավելին՝ թողնում է դյուրամատչելիության) տպավորություն, սակայն իրականության մեջ ստեղծագործական ճախրանքների, մաքառման ու հոգևոր լարման ճանապարհ է։ Ուշադիր ընթերցումը վկայում է, որ Համո Սահյանի բանաստեղծությունների արտահայտման ձեռագիրը ավելի ու ավելի մերձենում է սովորական զրույցի, առօրյա խոսակցության, գեղջկական պատումների ոճին, բանաստեղծությունը ազատագրվում է «բանաստեղծականությունից» (այս հասկացության այն նմուշների իմաստով, որոնց Պ. Սևակը անվանում էր «գանգրահեր բառերի վաճառականություն»), անգամ երգային (ռոմանսային) հատկություններից՝ նեբարկելու կյանքի կենդանի շունչը, լիարժեք բովանդակությունը, երևույթի էությունը։ Իր բառային ինքնատիպ համաձայնություններով, բառերի կարգ ու սարքի իր համակարգով Հ. Սահյանը «սովորականացնում-հասարակացնում է» բանաստեղծությունը (ինչպես իր մեծ ուսուցիչը՝ Հովհ. Թումանյանը), ասել է թե ճանապարհ է տալիս այն աղբյուրներին, որոնք զարդանախշերի փոխարեն բերում են արտաքին աշխարհի գույների ու ձևերի ամբողջությունը։ Գեղարվեստական այդ խնդիրը՝ արտահայտման ձեռագրի սովորականացումը որքան հեշտ թվացող, նույնքան էլ դժվարին լուծվող առաջադրություն է, որը կարող են լուծել միայն բացարձակ տաղանդի, բնատդի ու ճաշակի տեր արվեստագետները։ Այդպիսին է Համո Սահյանը։ Հ. Սահյանը բանաստեղծու-

թյունը «հասարակացնում է» ոչ թե բառային անկազմակերպ խաժամուժի միջոցով, այլ բանահյուսական կնիքի բառային-խոսքային կառուցվածքների, ժողովրդական լեզվագանձերի, զրույցների, դիալոգների, մեներգների, զուգերգների, ասքերի շտեմարանների օգտագործման ճանապարհով։ Նման կողմնորոշման դեպքում միանգամայն հասկանալի են դառնում Հ. Սահյանի բանաստեղծությունների ներքին էներգիայի հզորությունը, զգացմունքների հասունությունը և մտածմունքների իմաստությունը, հարուստ հոգեկան տարերքը։

Հ. Սահյանի բառերը ոգու էության կրողներն են։ Իհարկե ոչ թե այդ բառերի բառարանային գրանցումների տեսքով, այլ հոգեկան աշխարհի խառնարանով անցած բառային միացություններն ու համաձայնությունները։ Բանաստեղծի բառային միացությունների մեջ ամենաաչքի ընկնող հատկանիշը դրանց զարմանալի բնականությունն է։ Ընթերցողը բնավ չի զգում այդ միացությունների կերպը, այսպես կոչված «արհեստը». բառի կողքին հայտնվում է մի նոր, սովորական բառ, պատկերի կողքին՝ մի նոր, սովորական (կամ անսովոր) պատկեր, իսկ հուզապրումը այդ կապերի բարդ շղթայում ձեռք է բերում արտահայտման ներքին ձևը, այսպես կոչված կառուցվածքը։ Ահա այս ճանապարհով Հ. Սահյանը լուծում է ձևակառուցվածքային նոր խնդիրներ, շեշտը, կրկնում եմ, դցելով ոչ թե արտաքին կողմի վրա, այլ ասելիքի խորության, աղնվության, բնականության, ճշմարտության։

Թեև հայ և ռուս քննադատները, դառնալով Հ. Սահյանի քնարերգությանը, նրա գեղարվեստական աշխարհին, առանձին ուշագրավ դիտողություններ են արել արտահայտչության մասնավոր կողմերի վերաբերյալ, սակայն նրա պոետիկական արվեստի ամբողջական և մանրակրկիտ հետազոտությունը գրականագիտության օրակարգի չլուծված խնդիրներից մեկն է։ Գիտական խոր բացահայտման կարիք ունեն թե՛ ժողովրդախոսակցական լեզվի հարուստ շտեմարանից օգտվելու սահյանական չափազանց ինքնատիպ եղանակները (որ չի կարելի ամենևին շփոթել ազգագրական-բարբառային ոճավորումների հետ), թե՛ պատկերի կառուցման սահյանական «անակնկալները», թե՛ բառային ձևերի միանգամայն ինքնուրույն համաձայնությունները, թե՛ բանաստեղծական ռիթմի, հանգի բնաբուխ զգացողությունները, թե՛ ցածր, սովորական և բարձր, հանդիսավոր ոճային-բառային շերտերի զուգակցությունները և այլն, և այլն։

Հ. Սահյանի մասին ասված խոսքերից թերևս ամենապատշաճը «իմաստուն» բնորոշումն է,— ոչ թե հանրագիտակ, այլ ժողովրդական արմատներից վեր բարձրացած, ժողովրդյան ճակատագրով ներշնչված իմաստուն-բանաստեղծ, որի քնարերգության էջերը լեփ-լեցուն են կեցության բարդ շերտերի սուղումներով, հարցերով և պատասխաններով, թեևավոր բառ ու բանով։ Հիշենք դրանցից մի քանիսը։

Կենաց արմատների մեծարանքը՝

Եվ դառնամ դարձյալ հավքին աղոթեմ,
Աղոթեմ ծաղկին, հասկին աղոթեմ,—
Աղոթեմ խոտին։
Եվ դառնամ դարձյալ հողին աղոթեմ,
Արդար քրտինքի ցողին աղոթեմ,
Աղոթեմ խոտին։
Եվ դառնամ դարձյալ խոսքին աղոթեմ,
Ոչ թե անցավոր ցոլքին աղոթեմ,
Աղոթեմ խորքին...

. . . . . .

Ամեն օր բացվող լույսին աղոթեմ
Ու լույսի հոտին...

Հայոց լեզվի իմաստավորումը՝

Նա պիտի մեր առաջին
Ու վերջին սերը լինի,
Ի՞նչ ունենք էլ աշխարհում
Որ այսքան մերը լինի։

Համո Սահյանն ունի բանաստեղծական ինքնաբնութագրություններ, որոնցից մեկը հետևյալն է՝ «Աստղի նման ես բառերի մեջ ճառագեցի»։ Նրա Բառերն, իրապես, արտացոլում են իր հարուստ, 70-ամյա ճանապարհը, իր արմատն ու իր ճակատագիրը։

Հ. Սահյանն ունի տողերիս հեղինակին ձոնած մի բանաստեղծություն՝ «Թե ով եմ և ինչ» հարցումնային վերնագրով։

Եվ քո աչքերը հարցնում են դարձյալ
Թե ով եմ և ինչ,
Եվ իմ ճանապարհն ուր է վերջանում...

Հետևում են հարցի պատասխանները, թե ինքը ծառի տերևի «առեղծվածային ջանքն է», թևավոր հավքի ներշնչանքն է, ծարավ հողին ջուր տանող գետի տառապանքն է, արտերի հասկավորման խորհուրդն է, նախնագարից մեր օրերը հասած քարանձավի հառաչանքն է,— այս ամենից հետո,— գրում է բանաստեղծը,—

Աչքն ու ականջն եմ ես մայր բնության,
Գիտակցությունը նրա մարմնավոր,
Հասակակիցն եմ նրա հնության
Եվ ծլարձակումն ու ծաղկումը նոր։

Սա է Համո Սահյանի ճանապարհը։